

տառապեցընելով ծեծի տակ կը մեռ-
ցընէին :

Վեզի գաղափար մը տալու համար
թէ ինչպէս յօժար ու խնամու էր բա-
րերարելու, կ'ուզեմ առաջ բերել իր
մէկ թուղթը զոր գրեց մէկու մը, լսե-
լով որ կարօտութեան մէջ է .

Բարեհամ,

Նախիս մէջ 20 սոհի լուիմէ պիտի գըտ-
նաս, այլ գիտոցի որ դրաս քեզի պարգևել
չէ այս գումարս, այլ դայն էմի դալ. ելեւ
բանդ յաջողի դրսանահ ինձի դարձնելու ուսոր
գուու դուին ճանչցած հարօս մարդուու, այ-
սու պայմանաւ որ ների ալ վաստընէն՝
դանի դայ ուրիշին նովին դաշամբ : Հառ
ունեւոր չըլլաւը չէմ իրնար ուղած բարիսս
ընել . անոր համար պարտառըն էմ այս-
պէս ընելու որ տէշով շատերուն ծառայու-
նիւն ընեմ, առանց զիս լար նէշը խօնե-
լու : Ուշ էր .

22 Ապրիլ 1784

Ֆրանչլին

Արակէս զի իր բարեգործութիւնները
կեանքին հետ մէկտեղ զմբննան, խել
մը դահեկան ձգեց կրթարանաց հա-
մար, որոնց մէջէն 50,000 ֆրանգը,
զորոնք այլ և այլ պաշտօններով շահեր
էր, թողուց որ բարեկիրթ երիտասարդ

արուեստաւորաց փոխ տան որով կարե-
նան իրենց խանութը բռնել . պայման
դնելով որ 100հն օ վճարեն, և այս վը-
ճարբը որ 100 տարիէն վեց միլիոն ու
կէսի պիտի հասնէր, սահմանեց որ մե-
ծաւ մասամբ կամուրջ, փողքակ, բա-
ղանիք, ճամբայ և ջրմուղ շինելու գոր-
ծածեն, ու մնացածը նոյն կերպով փոխ
տան այն արուեստաւորներուն՝ որոնք
Վիրանքլինի պէս աղքատութեամբ ու
միանգամայն վաստակասիրութեամբ կը
սկսին իրենց ասպարէզը :

Արտեսնեն ուրեմն, բարի պատանեակ,
որ Վիրանքլին ալ քեզի պէս աննշան
տղուն մէկն էր . չունէր ոչ հարստութիւն,
ոչ ազգականութիւն, ոչ պաշտպան .
բայց իր արժանաւորութիւնը, աշխա-
տելու և խնայելու կամքը, ժամանակին
աղէկ վարումն ու լոււթեամբ համբե-
րելը, այն ողորմելի գուեհիկ տղան փար-
թամացուցին և պարզեցին իրեն մե-
ծամեծ պատիւներ ու այնպիսի փառք
մը որուն նմանը պիտի ըըլլայ : | Կր մա-
հուանը վրայ Վիրացեալ Դահմանքնե-
րը երկու ամիս սև հագան . Եւրոպա
ամէն տեղ վրան արցունք թափեցին . և
իր անունը պիտի մնայ անոնց մէջ որք
Ճշմարիտ փառք ստացան, այսինքն բա-
րերարել եղբարց, հայրենեաց և բո-
վանդակ ազգի մարդկան :

Իր շարունակուի :

ԱՂՅ ԹՐ

Փառօք 'ի մուտա արքայն տունջեան լուսազգեաց

Կայ իջանէ յուշիկ յաղթողն 'ի կառաց .

Ըողի անօսր անտես աչաց շողշողեալ,

Ռզէետսն յերկինս ունի յակօսս ուկեփայլ,

Երփնեալ զեթերս ըսփիւռ ծաւալ ծիրանի .

Լուսինն հանգոյն ոսկեայ առ կախ լապտերի ,

Լ կապուտակ անդ կամարին յեզր 'ի ճօճ,

Ըողք իւր նըւաղք 'ի գալարեաց նիրհէ ծոց .

Լ ըզերամբ քող ծաւալի զիշերոյն :

յամ, յոր վայրիկ յինքն ամփոփեալ բընութիւն,
Ինդ փախըստեայ տիւն և ընդ ցայգըն տարած՝
Ալանայ առ այն որ զտիւ և զցայգ հաստատեաց.
Եւ 'ի բարբառ իւր մեծաշուք թուի պաշտել
Կարչագործ վեհին փառաց վեհ նըւէր :

Ո՞վ պատարագ մեծահանդէս հանրական .
Տիեզելք տաձար է և երկիրըս սեղան .
Երկինք գըմբեթ, և բոյլք բուլց աստեղաց՝
Շատափայլ բոցք 'ի պաճոյջ ըստուերաց,
Դեղայօրէն ցանեալք կապոյտն 'ի կամար,
Աըրեանըւէր ջահք են լուցեալք 'ի տաձար .
Եւ շիջանուտն 'ի տիւ գունեալ ջինջ ամպեր,
Օսրս հողմ 'ի մեզմ շունչ 'ի մըտից անգը 'ի յել,
Ինդ դաշտս օգոց ողորտելով թուլակի՝
Արէ բարդէ ծիրանեփայլ յափն երկնի,
Ալբոտք խընկոց են սիւնք սլացիկք ամպեղէն
Հըգահ Լին, զոր համագոյքըն պաշտեն :

Ե՞լ անմըուռնչ է այս տաձար . ուր սուրբ ձայնք .
Ո՞ւստ առ արքայն համագոյից եցեն նուագք .
Ե ըսեն համայնք . խօսի լոկ սիրտս յայս լուռթիւն,
Տիեզերաց ձայն են խորհուրդք իմ համբուն .
Երեկորին շողիցն 'ի թեսս և հողմոյ
Խոռնկ կենդանի սլացեալ 'ի նուէր Եստուծոյ .
Ար լեզու իմն և ձայն տըւեալ համայնից,
Ե՞ս 'ի պաշտել ըզնա յաւանդ տայ զհոգիս .
Օսրը ես միայն զհայրագորովն հայեցուած
Զայնեալ, լընում յանուն Լին շուրջ զամայս .
Եւ որ լըսէն յանհուն փառացն իւր 'ի ծոց
Օերգ կամսրացն երկնից յիւրմէ կարգելոց .
Եա և զխոնարհ լուիցէ մըրմանջ մըտացս իմ,
Որ զիւր անուն կարգամ և զիառսըն խօրհիմ :

Ողջոն ընդ քեզ ըսկիզբն և վերջ բնաւ էից,
Օսրս 'ի քըթթել ական ծնանիս յոշէից .
Տիեզերաց հոգի Եստուած, ծնող և հայր,
Խոստովանիմ ըզքեզ դ' անուամբքդ այլ և այլ .
Եւ անկարօտ լըսել շըրթանց քոց ըզքան՝
Օիմն 'ի յերկնից ձակատ կարդամ վեհ նըշան .
Եզմեծութիւն Լիդ պատմեն տիեզերք,
Բըսարութիւնդ երկիր համայն, զլայսդ աստեղք .

Դաւ 'ի ըլքնաղ քո հրաշակերտս ՚ի յայտ զան,
Եւ տիեզերք բերեն ըզքո կերպարանս.
Եւ ես հոգւովս իմ վերբերեմ զտիեզերս,
Բառվանդակեալ մըտօք զանուանս քո պէսակէս.
Եմնուրեք զքեզ տեսանեմ և սլաշտեմ.
Եկընկառոյց յիս՝ և ըզքեզ գըտանեմ:
Եյակէս փայլէ աստղըն տունջեան ՚ի բարձունս,
Յոլայ յալիս և նըկարի յիմ աչկունս.
Դոյզն ինչ է յոյժ, դոյզն ինձ ՚ի քեզ հաւատալ,
Ով բարութիւն և գեղ վըսեմ գերափայլ:
Բնդ ամենայն ուրեք ըզքեզ ինդրեմ ես,
Ենձկակարօտ քեզ և սիրեմ միշտ ըզքեզ:
Հոգիս նըշոյ իմն է լուսոյ և սիրոյ,
Որ յաստուածեան հնոցէն անկեալ արտաքոյ,
Ենձկաւ ծախեալ ՚ի սպառ ՚ի քէն տարագիր,
Ու երամբառնալ տարփայ յաղբիւրն ՚ի հրալիր.
Ը ընչեմ ՚ի քեզ, ըզգամ, խորհիմ սիրեմ ես,
Եւ թափանցիկ է ինձ աշխարհ, ծածկիչ քեզ:
Դաւ ՚ի բնութեան յայտնիս ՚ի խորս ՚ի ծոց իւր,
Եւ զքեզ օրհնեմ ես յըստեղծուածս ընդհանուր:
Եր ՚ի մօտել քեզ խոյս ետու յայս ամայ.
Ենդ արշալոյս ըզքօղն յեթերս մինչ բանայ,
Յելեալ զոլորտս զորս երփնէ տիւ նորածին
Յանեալ լերանց զայգուն ըզտեղ մարգարտին,
Վո են հայեացք որ ՚ի կայիցդ աստուածեան
Փայլեալ յաշխարհ՝ յորդեն ըզլոյս տըւընջեան:
Ի միջօրեայն երբ աստղն ՚ի կախ առեալ զկայ,
Տեղ կենսածիր լուսոյ, ջերոյ ինձ տեղայ,
Եզզօրութիւն քո և ըզշունչ ըզգամ, Տեր,
Ի կենսատուր շողիցն ՚ի յիս ներգործել.
Եւ մինչ գիշեր շուրջ զաստեղացն առեալ պար,
Յանկեան ըզքնով սրփուէ ըզսեաւ քօղն յաշխարհ,
Խաւարամած և յամայիս մենաւոր,
Բնդ գիշերս վեհ քաղցրութիւն մըտախորհ,
Ի լուսութեան և ՚ի մըթան անվըրդով,
Եօտ ևս ըզքեզ տեսեալ պաշտեմ ես հոգւով.
Եւ լուսով իմն իմանալեաւ ՚ի ներքուստ
Եզդի յիս ձայն որ խրախուսէն զիս ՚ի յոյս:

Եյու, յուսամ, Տեր, ՚ի քո պերճ մեծութիւն,
Որ ընդ հանուր բաշխես ըզկեանս լիաբուռն.
Եւ զկենացս աւուրս իցես սահմանեալ

Ատորայնովքս այս սուղ աւուրբքըս թշուառ :
 Դու ընդ հանուր ծնանիս, պահես անդադար,
 Խորշի եղծուլ որում հաստելն իցէ կար .
 Դիմակակ բազկիդ ու' նդ բարութիւնդ անկասկած'
 Ենմահութեան մընամ աւուրն ես անանց :
 Օուր զիս մահուն ունին ըստուերք տըխրագէմ,
 Ոժափանց ընդ մնւթն հոգւովս ըզտիւ նըշմարեմ .
 Այդ ինձ վերջին է ոտնափոխ գալ առ քեզ,
 Դա առագաստ անկեալ ընդ մէջ 'ի քո տես :
 Տէր, 'ի կարձոյ հասցէ ինձ ժամն ըղձալի .
 Իսկ անքընին թէ ըստ գաղտնեացդ յերկարի ,
 Լուր 'ի բարձանց կարեացս ըզձայն և զաղերս ,
 Որ զտիեզերս և զդոյզն հիւլէ դու ինամես .
 Լըցն ըզպէտո իմ պարգեօք քոց բարեաց ,
 Օհոգիս յուսով և ըզմարմինս իմ 'ի հաց .
 Յամենազօր աշացդ 'ի շող ջեռու յիս
 Ի զգայութեանցս իմ մըթագնեալ ըզհոգիս .
 Եւ իբր արե որ զցօղ ծըծէ վաղորդայն'
 Ի ծոց քոյին ընկլո զխորհուրդս յաւիտեան :

ԼԱՄԱՐԴԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ



(Տես երես 206)

Ին ատեն Փիլիպոս Պերինթեայ
 վրայ քալեց, բայց չի կրցաւ անոր ալ
 տիրել, վասն զի բիւզանդացիք շուտով
 մը օգնութիւն խաւրեցին : Փիլիպոս
 տեսնալով որ առանց բանակին մեծ մա-
 սը կորսնցընելու պիտի չկարենայ քա-
 ղաքը առնել, պաշարումը վերուց, և
 սկսաւ Արաբարայի քանի մը քաղաքնե-
 րուն տիրել ու Բիւզանդիոյ շրջակայքը
 աւրըշտկել : Դյերակոյտն ու ժողովուր-
 դը | և ու ճարտասանը Աթենք խաւրե-
 ցին որ երթայ օգնութիւն իննդրէ, վասն
 չի իրարու բարեկամ էին, Պլուտար-
 քոս՝ Փիլիպոսի վալքին մէջ առ ճար-
 տասանին համար կ'ըսէ թէ, թերեւս

միայն իր հանձարովը կրցաւ այս բանս
 յաջողցընել . ասիկայ կարձահասակ ,
 լայնափոր ու բարակ սրունքներով մարդ
 մըն էր, անանկ որ երբոր ատեանը ելաւ
 որ խօսի, ամէնքն սկսան ինստալ . բայց
 ինքը առանց խռովելու “ Աթենացիք ,
 ըստ , թէ որ կիսս տեսնալու ըլլայիք ,
 աւելի պիտի ինստայիք . վասն զի ինքը
 ինձմէ աւելի պտտիկ է . բայց և այնպէս
 թէ որ իրարու չմիաբանինք , Բիւզան-
 դիոն չի կրնար զմեզ նուաճել ” :

Աթենացիք արդէն Փիլիպոսի թըշ-
 նամացած ըլլալով և ուզելով իր ամ-
 բարտաւանութիւնը սանձել , քառասուն
 նաւ խաւրեցին, Վարէսի առաջնորդու-
 թեամբը, որ շիտակ Բիւզանդիոն գնաց
 և Վաղկեդոնիոյ դիմացը Աթակեդոնա-
 ցւոց նաւատորմղին հանդիպելով, զա-
 նոնք պատերազմի գրգուեց : Ամինիաս՝
 Փիլիպոսի ծովակալը յանձն առաւ պա-
 տերազմը , և Աթենացւոց յաղթելով ,
 քանի մը հատ ալ գերի բռնեց : Փիլիպ-
 ոսու առ յաղիքութեանս վրայ սիրտ աւ